



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

N 929-Ն

19.09.2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2013
ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 15-Ի 1031-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 31-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N 1745-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 4-րդ և 6-րդ կետերով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Կրթության և գիտության նախարարի 2013 թվականի օգոստոսի 15-ի՝ «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման տարակարգի բնութագրիչները, որակավորման տարակարգերի շնորհման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը հաստատելու մասին» 1031-Ն հրամանով հաստատված հավելվածի.

- 1) 2 կետը «դեպքում» բառից հետո լրացնել «,որոնք տարբերվում են որակավորման առաջին աստիճանի տարակարգի բնութագրիչներից» բառերով,
- 2) 6-րդ կետի 5)-րդ ենթակետի «ա» պարբերությունը՝ «միջազգայնորեն» բառից հետո լրացնել «կամ կրթության ազգային ինստիտուտի կողմից» բառերով:

2. Աշխատակազմի իրավաբանական (պետ՝ Վ.Բավեյան) և հանրակրթության (պետ՝ Ն.Հովհաննիսյան) վարչություններին՝ հրամանը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

/ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ